

## ՀՀ ֆինանսների նախարարություն

### Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 44/4

3 նոյեմբերի 2015 թ.

Քննարկվեց Ա/Ձ Գևորգ Կարապետյանի 08.10.2015 թ-ի վարչական բողոքը ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետի 24.08.2015 թ-ի թիվ 26/06 որոշման դեմ:

#### **Ա/Ձ Գևորգ Կարապետյանի բողոքում բերված փաստարկները.**

24.08.2015թ-ին ՀՀ ֆինանսների նախարարության իրավաբանական վարչության պետի կողմից կայացվել է թիվ 26/06 որոշումն Ա/Ձ Գևորգ Կարապետյանի վերաբերյալ՝ հարկ վճարողից ժամանակին չվճարված հարկային պարտավորությունների գծով վճարման ենթակա գումար գանձելու մասին:

Որոշումը փոստային ծառայության միջոցով ստացվել է 03.09.2015 թ-ին: Ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 70, 71 հոդվածներով ներկայացվում է սույն վարչական բողոքը:

1996 թ-ին օգոստոսի 30-ին Մասիսի տարածքային պետական ռեգիստրի կողմից Գևորգ Կարապետյանը գրանցվել է որպես անհատ ձեռներեց և տրվել թիվ Օ/Ա 026129 վկայականը: Հաշվառվել է Մասիսի հարկային տեսչությունում (այժմ հաշվառված է էջմիածնի ՏՀՏ-ում), ստացել է թիվ 45103779 ՀՎՀՀ-ն: Ձեռնարկատիրական գործունեություն ծավալել է 3 ամիս: Այնուհետև պետական ռեգիստրի վկայականն իր դիմումով հանձնել է հարկային տեսչությանը:

Ա/Ձ Գևորգ Կարապետյանը հայտնում է, որ 1997 թ-ից հետո ոչ մի գործունեությամբ չի զբաղվել: Այդ 3 ամիսների ընթացքում նա ոչ մի եկամուտ չի ստացել և ոչ մի վճարումներ չի իրականացրել: Գործունեությունը դադարեցնելուց հետո անցել է շուրջ 19 տարի: Հարց է ծագում, թե ուր էր հարկային մարմինն այսքան տարիներ, ինչու հաշվետվություններ չներկայացնելու և վճարումներ չկատարելու համար վարչական տույժերի չի ենթարկվել, կամ ինչի արդյունքում է գոյացել իբրև թե սկզբնական ապառքը՝ 120.400 դրամը, որ ժամանակաշրջանի համար: Կամ, եթե առկա էր ապառք, ապա ինչու տվյալ ժամանակ չի ծանուցվել այդ գումարը վճարելու մասին: Արդյունքում, չունեցած պարտքի գումարը դարձել է 744.567 դրամ:

Հարկ է նշել նաև, որ դեռևս 2007 թ-ի սեպտեմբերի 7-ի «Հայաստան» օրաթերթի թիվ 26 համարի վերջին էջում զետեղված է հայտարարություն Ա/Ձ Գևորգ Կարապետյանի պետական ռեգիստրի վկայականը կորելու մասին: Այդ հայտարարությունը տրվել է Մասիսի հարկային տեսչության կողմից:

Ա/Ձ Գևորգ Կարապետյանը գտնում է, որ վերոգրյալ վարչական ակտը թյուրիմացության արդյունք է, ուստի այն ենթակա է վերացման, քանի որ կայացվել է առանց օրինական հիմքերի: Որոշման մեջ նշված է, որ իբրև թե չեն կատարվել 2009-2012 թ.թ. պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով պարտավորությունները, այն դեպքում, երբ 2007 թ-ին արդեն թերթում տրվել է հայտարարություն՝ պետական ռեգիստրի վկայականի կորստի մասին:

Ելնելով վերոգրյալից՝ Ա/Ձ Գևորգ Կարապետյանը խնդրում է վերացնել ՀՀ ֆինանսների նախարարության իրավաբանական վարչության պետի 24.08.2015 թ-ի թիվ 26/06 որոշումը:

**ՀՀ ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.**

ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետը, քննարկելով Ա/Ձ Գևորգ Կարապետյանի վերաբերյալ վարչական վարույթի նյութերը պարզել է, որ 24.08.2015 թ-ի դրությամբ նրա չկատարված հարկային պարտավորությունները կազմում են 744.567 դրամ, այդ թվում՝ ապառք 400.700 դրամ, տույժ 343.867 դրամ: Պարտավորությունն առաջացել է Ա/Ձ Գևորգ Կարապետյանի կողմից ներկայացված ԱԱՀ-ի և եկամտահարկի հաշվարկներում արտացոլված պարտավորությունները, ինչպես նաև 2009-2012 թ.թ.-ի ընթացքում «Պարտադիր սոցիալական ապահովության վճարների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 5-րդ կետով հաշվարկված նվազագույն սոցիալական ապահովության վճարները սահմանված ժամկետներում չվճարելու հետևանքով:

Արդյունքում, ղեկավարվելով «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 29.1 հոդվածի և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 55-րդ, 56-րդ, 58-րդ, 88-րդ հոդվածների դրույթներով ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետի կողմից 24.08.2015 թ-ին ընդունվել է թիվ 26/06 որոշումը (այսուհետ նաև Որոշում) Ա/Ձ Գևորգ Կարապետյանից 744.567 դրամ պարտավորության գումար գանձելու վերաբերյալ:

Որոշմամբ 2009-2012 թ.թ.-ի համար նվազագույն սոցիալական ապահովության վճարների գծով գանձման առաջադրված պարտավորությունների կապակցությամբ՝ ընդհանուր գումարով 371.367 դրամ, հարկ է նշել, որ մինչև 31.12.2012 թ-ը գործող «Պարտադիր սոցիալական ապահովության վճարների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն, անհատ ձեռնարկատերերը պարտավոր են յուրաքանչյուր ամսվա համար վճարել նվազագույն սոցիալական վճար՝ 5000 դրամի չափով, մինչև հաջորդ ամսվա 15-ը: Ընդ որում, պետական գրանցման վկայականը ժամանակավոր հարկային մարմին հանձնած (մինչև 25.07.2012 թ-ը) և այդ ժամանակահատվածում ձեռնարկատիրական գործունեություն չիրականացրած անհատ ձեռնարկատերերը նվազագույն սոցիալական վճարներ չի կատարում՝ վկայականը հանձնելուն հաջորդող ամսվանից մինչև վկայականը հետ ստանալու ամիսն ընկած ժամանակահատվածի համար:

Դա նշանակում է, որ անհատ ձեռնարկատիրոջ կողմից պետական գրանցման վկայականը ժամանակավորապես հարկային մարմին հանձնած չլինելու դեպքում անհատ ձեռնարկատերը պարտավոր էր վճարել 5000 դրամ նվազագույն սոցիալական վճար՝ անկախ ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու կամ չիրականացնելու հանգամանքից:

Քննարկվող դեպքում Ա/Ձ Գևորգ Կարապետյանի կողմից պետական գրանցման վկայականը ժամանակավորապես հարկային մարմին չի հանձնվել (այն հանձնվելու վերաբերյալ գործում առկա չէ որևէ ապացույց), ինչը և հիմք է հանդիսացել նվազագույն սոցիալական վճարի գծով պարտավորությունների հաշվարկման համար:

Միևնույն ժամանակ Հանձնաժողովը, ուսումնասիրելով ՀՀ պետական ռեգիստրի կողմից 03.09.1996 թ-ին Գևորգ Կարապետյանին տրամադրված անհատ ձեռներեցի պետական գրանցման թիվ 026129 վկայականը (այսուհետ՝ Վկայական), պարզեց, որ քաղաքացի Գևորգ Կարապետյանը ՀՀ պետական ռեգիստրում որպես անհատ



ձեռներեց գրանցվել է 30.08.1996 թ-ից: Ընդ որում, Վկայականում նշված է, որ այն ուժի մեջ է միայն ներդիրի հետ:

Հանձնաժողովը, ուսումնասիրելով Վկայականի թիվ 01 ներդիրն արձանագրեց, որ վերջինիս համաձայն Ա/2 Գևորգ Կարապետյանի գործունեության ժամկետը սահմանված է մինչև 31.12.1998 թ-ը:

Վերոգրյալի կապակցությամբ հարկ է նշել, որ «Անհատ ձեռնարկատիրոջ մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի համաձայն. «Ֆիզիկական անձի, որպես անհատ ձեռնարկատիրոջ, իրավունակությունն ու գործունակությունը ծագում են նրա պետական հաշվառման պահից և դադարում են այդ ֆիզիկական անձի իրավունակության կամ գործունակության դադարման, ինչպես նաև օրենքով նախատեսված դեպքերում պետական հաշվառումն ուժը կորցրած կամ անվավեր ճանաչվելու պահից»:

Քննարկվող դեպքում Վկայականում, ինչպես նաև դրա ներդիրում կատարված գրառումների համաձայն, Ա/2 Գևորգ Կարապետյանը 31.12.1998 թ-ից դադարել է անհատ ձեռնարկատեր համարվել: Այսինքն, ըստ էության, դադարել են Գևորգ Կարապետյանի որպես անհատ ձեռնարկատիրոջ իրավունակությունն ու գործունակությունը:

Հաշվի առնելով վերոգրյալը, ինչպես նաև հիմք ընդունելով այս հարցի կապակցությամբ Հանձնաժողովի ընդունած որոշումները, Հանձնաժողովը գտնում է, որ Ա/2 Գևորգ Կարապետյանի նկատմամբ 2009-2012 թ.թ.-ի համար նվազագույն սոցիալական ապահովության վճարների գծով պարտավորություններ չեն կարող հաշվարկվել:

Ինչ վերաբերվում է Որոշմամբ եկամտահարկի և ԱԱՀ-ի գծով գանձման առաջադրված պարտավորություններին, համապատասխանաբար՝ 139.300 դրամ և 233.900 դրամ, ապա հարկ է նշել, որ նշված պարտավորություններն առաջացել են Ա/2 Գևորգ Կարապետյանի կողմից 1996 և 1997 թ.թ. համար ներկայացված տարեկան հաշվարկներով: Հետևապես, Որոշմամբ եկամտահարկի և ԱԱՀ-ի գծով գանձման առաջադրված պարտավորությունները Ա/2 Գևորգ Կարապետյանի կողմից ենթակա են վճարման:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

### ո թ ո շ ու մ է՝

ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետի 24.08.2015 թ-ի թիվ 26/06 որոշմամբ գանձման առաջադրված պարտավորությունները նվազեցնել 371.367 դրամի չափով:

Սույն որոշմանը չհամաձայնվելու դեպքում այն ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան:

Հանձնաժողովի նախագահ՝

  
Վ.ՍԻՐՈՒՄՅԱՆ

